ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի ապրիլի 10-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Առավոտ» օրաթերթ, 20.02.2024, N 031 / 7032) բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մարիա Արմենակի Սահակյանի՝** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Գրիգորյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողները նշեցին. «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի փետրվարի 20-ի N 031 / 7032 համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2024 թվականի մարտի 15-ին ռեկտորին դիմում է ներկայացրել բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մարիա Արմենակի Սահակյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Մ.Ա.Սահակյանը ծնվել է 1981 թվականի հունվարի 20-ին Երևանում: 1988-1998 թթ. սովորել և ոսկե մեդալով ավարտել է Չկալովի անվան թիվ 30 միջնակարգ դպրոցը: 1998 թվականին ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համասարան), որն ավարտել է 2003 թվականին գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի (ներկայում՝ Հայ-ռուսական համալսարան) առկա ուսուցման ասպիրանտուրա:

2007 թվականին Մ.Ա.Սահակյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ռազմավարական կառավարման արդյունավետությունը զբոսաշրջության ոլորտում (ՀՀ նյութերով)» թեմայով Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2012 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Մ.Ա.Սահակյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 64 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 դասախոսությունների տեքստ՝ համահեղինակությամբ, 2 կոլեկտիվ մենագրություն՝ համահեղինակությամբ (հրատ.՝ Մոսկվա), 60 գիտական հոդված, որից 19-ը՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում (այդ թվում 2-ը համահեղինակությամբ), 41-ը՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում, որից 36-ը համահեղինակությամբ (այդ թվում 6-ը՝ հրապարակված Scopus և Web of Science միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում՝ համահեղինակությամբ):

Աշխատանքային գործունեությունը: Մ.Ա.Սահակյանը 27.01.2005 - 22.04.2008 աշխատել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առևտրի և այլ ծառայությունների վիճակագրական բաժնում՝ երկրորդ կարգի մասնագետ (25.05.2005՝ նրան շնորհվել է ՀՀ քաղաքացիական ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան), 22.04.2008 - 04.08.2008՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մակրոտնտեսական հետազոտությունների և կանխատեսումների բաժնում՝ գլխավոր մասնագետ, 14.01.2009 - 25.09.2012՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (14.01.2009 - 24.03.2011 վիճակագրության և վերլուծության բաժնում՝ առաջատար մասնագետ, 24.03.2011 - 25.09.2012՝ տնտեսական վերլուծությունների բաժնում՝ գլխավոր մասնագետ): Մ.Ա.Սահակյանը 2012 թվականի սեպտեմբերի 27-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (27.09.2012 -

08.04.2021՝ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում՝ դոցենտ, իսկ 2021 թվականի ապրիլի 8-ից առ այսօր աշխատանքի տնտեսագիտության և բիզնեսի կազմակերպման ամբիոններից ձևավորված բիզնես վարչարարության ամբիոնում՝ դոցենտ): Մ.Ա.Սահակյանը աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում աշխատել է նաև համատեղությամբ (01.09.2009 - 01.07.2012՝ ասիստենտ, 03.09.2012 - 26.09.2012՝ դոցենտ): Միաժամանակ, 2005 թվականից առ այսօր դասավանդում է Հայ-ռուսական համալսարանում (կառավարման և բիզնեսի ամբիոնում՝ դոցենտ): Մ.Ա.Սահակյանը մասնակցել է տասնյակից ավելի վերապատրաստման դասընթացների, տեղական և միջազգային տարբեր ծրագրերի, ինչպես նաև ամբիոնային ուսումնակրթական գործընթացին:

Ամուսնացած է, ունի 2 զավակ:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի 2024 թվականի մարտի 29-ի նիստում (արձանագրություն N 9) քննարկվել է բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Մ.Ա.Սահակյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պարտականությունները կատարող, ուսումնական բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Ա.Պետրոսյանը: Նիստին հրավիրված է եղել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Մ.Ա.Սահակյանը ներկայացրել է բիզնես վարչարարության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, Ա.Վ.Գրիգորյանը, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Ա.Ս.Մելքումյանը, ամբիոնի դոցենտներ Մ.Վ.Բաղալյանը, Լ.Վ.Կարապետյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին, ունի մարդկային, մասնագիտական և կազմակերպչական բարձր հատկանիշներ: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը

դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (միաձայն՝ կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չի մասնակցել Մ.Ա.Սահակյանը) որոշվել է, որ Մ.Ա.Սահակյանը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին և բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար նախապատվություն են տվել Մ.Ա.Սահակյանի թեկնածությանը:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 3): Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (միաձայն՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Մարիա Արմենակի Սահակյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ա.Ա.Մկրտչյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Մարիա Արմենակի Սահակյանը ներկայացրեց բիզնես վարչարարության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Ա.Ս.Մելքումյանը, դոցենտ Ն.Հ.Խալաթյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Մարիա Արմենակի Սահակյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 54-ը. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 54, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բիզնես վարչարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մարիա Արմենակի Սահակյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. ապրիլի 10
Երևան